



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## Ա. ԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ԹԵՍԻՆ ՄԵԶ

### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ Ա. ԾՆՆԴԵԱՆ ԸՆԹՐԻՔԸ ՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄ՝ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԱՐԵԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԵԶ

- ԳԱՊԱՅԵԱՆ ԲԱՐԵՐԱՐ ԱՄՈԼԸ 500,000 ՏՈԼԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵ  
Ս. ՆԱՅԱՏԱԿԱՅ ԱՉԳԱՅԻՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻՆ

- ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԸ ՊԻՏԻ ԿՈՉՈՒԻ «ԱՉԳ. Ս. ՆԱՅԱՏԱԿԱՅ ՍԱՐԻ  
ԳԱՊԱՅԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ»

Տարեմուտին յաջորդող հայկական Ս. Ծննդեան տօնը առիթ է հոգեկան ու հաւաքական վերածնունդի, վերանորոգութեան ու մեր եկեղեցական ու ազգային ժառանգութեանց հաւատարմութեան վերահաստատումի: Եւ ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի եւս, այս տօնը նշուեցաւ օրուան յատուկ արարողութիւններով ու թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի Ս. Ծննդեան ընթրիքով: Արարողութիւններն ու տօնախմբութիւննը առիթ եղան հաղորդ մնալու մեր դարաւոր աւանդութեանց հետ, ինչպէս նաեւ՝ նոր տարուան առիթով բարեմաղթութիւններու փոխանակման եւ նոր յոյսերով լիցքաւորուելու:

Տօնի ոգին մեր ժողովուրդը իր մթնոլորտին մեջ պարուղեց Երեքաբթի, 5 Յունուարի երեկոյեն սկսեալ, ու տարածուեցաւ յաջորդ երկու օրերուն վրայ: Արդարեւ, 6 Յունուարի առաւտուն, հանդիսաւոր Ս. Պատարագ եւ ջրօրինեթի հոգեպարար արարողութիւն տեղի ունեցան մեր եկեղեցիներուն մեջ: Նոյն օրը, երեկոյեան, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին կից «Բաղրամեան» սրահին մեջ տեղի ունեցաւ Առաջնորդ Սրբազնին ընթրիքի երեկոն, իսկ Յիսգաբթի, 7 Յունուարին, մեր ժողովուրդը իր յարգանքը մատուցեց Ննջեցեալներուն ու աղօթքով խոնարհեցաւ անոնց յիշատակին առջեւ:

**ՃՐԱԳԱԼՈՅՑ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ**

Երեքշաբթի, 5 Յունուարի Երեկոյեան, մեր Եկեղեցիներուն մեջ տեղի ունեցաւ Ծրագալոյցի արարողութիւն եւ Ս. Պատարագ: Առաջնորդ Սրբազնը Ս. Պատարագ մատուցեց Ս. Նահատակաց Եկեղեցւոյ մեջ: Յաւատացեալները ունկնդիր եղան դպիրներու կողմէ կատարուած Ս. Գրային հատուածներու ընթերցման: Ս. Պատարագի աւարտին, հոգեւոր հայրերը ժողովուրդին տուին Քրիստոսի Ս. Ծննդեան աւետիսը:

Չորեքշաբթի առաւտոտոն, ու հակառակ աշխատանքի օր զլալուն, մեր Եկեղեցիները կր գտնուեին տօնական մթնոլորտի մեջ: Յանդիսաւոր Ս. Պատարագէ ետք, տեղի ունեցաւ ջորինեքի արարողութիւն, առ ի յիշատակ՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մկրտութեան: Առաջնորդ Սրբազնը Ս. Պատարագ մատուցեց Կլենտեյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մեջ ու իր պատգամին մեջ խօսեցաւ Ս. Ծննդեան տօնի անժամանցելի թելադրանքներուն ու մարդկութեան բերած յոյսին մասին: Արարողութիւններէն ետք, հաւատացեալները օրինուած ջուր տարին իրենց տուները, Տիրոջ պարզեւած բժշկութիւնն ու խաղաղութիւնը տանելով իրենց հետ:

## ԱՒԱՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՆ

Նոյն օրը, Երեկոյեան, Սունթեպելոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մեջ տեղի ունեցաւ Առաջնորդ Սրբազնին Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան աւանդական ընթրիքի ձեռնարկը, որ իբրեւ նորագոյն նուաճում արձանագրուեցաւ մեր Թեմի տարեգրութեանց մեջ, պսակուելով բացառիկ յաջողութեամբ:

Զեռնարկը նախաձեռնութիւնն էր Թեմիս Կրօնական ժողովին ու Ազգային Վաշչութեան, կազմակերպուած՝ Ազգ Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ: Այս տարուան հիւրընկալութիւնը միասնաբար յանձն առած էին Տէր եւ Տիկին Յարութ եւ Քրիստինա Չափարեան, Տէր եւ Տիկին Յակոբ եւ Քերա Չափարեան եւ Տէր եւ Տիկին Գեղրգ եւ Թույսի Յացպանեան ամոլները (China Pearl):

Ընթրիքի Երեկոն սկսաւ Առաջնորդ Սրբազն Յօր ու հոգեւորականաց դասուն թափօրով. մնմեր ի ձեռին, անոնք Քրիստոսի Ս. Ծնունդը ներկաներուն աւետեցին «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» եւ «Այսօր տօն է Ս. Ծննդեան» շարականներով: Ներկաները, իրենց կարգին, իրենց ձեռքերուն վառած մոմերով լուսաւորեցին սրահը եւ խորհրդաւոր մթնոլորտի մեջ ձայնակից եղան աւետիսին: Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապագեան ընթերցեց Յիսուսի Ս. Ծննդեան մասին Ղուկասի Աւետարանի հատուածը: Ապա, տեղի ունեցաւ աւանդական Թաթախի արարողութիւնն ու սեղաններու օրինութիւնը: Առաջնորդ Սրբազնը նաեւ կատարեց օրուան հիւրընկալներուն կողմէ ներկայ տիկիններուն նուեր տրուած մարգարտեայ խաչերուն օրինութիւնը, յայտնելով, որ անոնք նուեր կը տրուին ներկայ բոլոր կանանց, նկատի ունենալով, որ Վեհափառ Յայրապետը 2010 տարին հոչակած է Յայ Կնոջ Տարի:

Ընթրիքին ներկայ էին աւելի քան 600 հիւրեր եւ ազգայիններ, որոնք օրուան խորհուրդին համապատասխան մթնոլորտի մեջ զիրար շնորհաւորեցին ու բարեմաղթութիւններ փոխանակեցին:

Հիւրերուն շարքին եին Յայաստանի Յանրապետութեան գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ Տեարք Խաժակ Տիրհճեան եւ Վահէ Եագուպեան, Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դոկտ. Վիգեն Յովսեիսեան, Կեդրոնական Կոմիտեի Ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներ, Յայ Դատի, ՅՕՄի, Յ.Ս.Ը.Մ.Ի., Յամազգայինի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեանց Ներկայացուցիչներ, հայկական միութեանց ու կազմակերպութեանց Ներկայացուցիչներ, Յայաստանի նախկին արտաքին գործոց նախարար Տիար Րաֆֆի Յովհաննիսեան, Լու Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նորընտիր անդամ Տիար Փոլ Գրիգորեան, համալսարանական ու պետական վարժարաններու համակարգի դասախոսներ, թեմիս Ազգային Վարչութեան, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի, ծխական շրջաններու հոգաբարձութեանց եւ ժողովականութեան Ներկայացուցիչներ, բարերարներ ու Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան զօրակից բարեկամներ եւ մամլոյ ու պատկերասփիւրի Ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսավարը, Արք. Տ. Վագգեն Զինյ. Աթմաճեան, ձեռնհասօրէն վարեց յայտագիրը՝ իր պաշտօնական արտայայտութիւններու եւ մշակութային-գեղարուեստական բաժիններով: Ան առաջին հերթին բեմ հրաւիրեց Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի փոխ ատենապետուիի Տիկին Շովիկ Զեյթեանը, որ երեկոյին կազմակերպիչ մարմինին անունով ողջոյնի խօսք արտասանեց ու բարի Վայելում մաղթեց Ներկաներուն ու հիւրերուն:

Ողջոյնի ու բարեմաղթութեան խօսք արտասանեց նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան: Ան իր կարգին ողջունեց պաշտօնական հիւրերն ու Ներկաները, Նշելով, որ Յայկական Ս. Ծնունդը կը յատկանշուի իբրեւ մեր ազգային ու Եկեղեցական աւանդութեանց ուխտի վերանորոգման օր: Ան յիշեցուց, որ 2009 տարին որոշ դժուարութիւններով յատկանշուած էր նաեւ մեր ազգային կեանքին մէջ եւ յոյս յայտնեց, որ նոր տարին բարիք ու յաջողութիւն բերէ բոլորին: Դոկտ. Կ. Յակոբեան հակիրճ կերպով անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան, Նշելով, որ անիկա կը շարունակուի ժողովրդանուեր եւ ուսումնական կալուածներու մէջ, Առաջնորդարանիս հովանիին տակ գործող վարժարանները նոր սերունդին կը շամբեն հայութիւն ու ազգային աւանդներ: Ան յոյս յայտնեց, որ Կլենտեյլի մէջ նոր երկրորդական վարժարանի մը հաստատման ծրագիրը յաջողութեամբ պակասի յառաջիկային, ապա, գոհունակութեամբ վեր առաւ Լաս Վեկասի ծխական համայնքին իրագործումը՝ սեփական Եկեղեցի մը ուսենալու համար կալուածի մը ձեռք բերումը: Խօսելով Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ կատարուող աշխատանքներուն մասին, ան վեր առաւ յանձնախումբերուն, Տիկնանց Օժանդակ Մարմինին, անձնակազմին ու CASPSի Ներդրումները, եւ իր խօսքը Եզրափակեց կոչ ուղղելով Ազգ. Առաջնորդարանի բարերարներուն ու գործակիցներուն, որ նուիրեալ աշխատանքը շարունակուի նաեւ յառաջիկային, ի ինդիր մեր Դատին ու ազգային կեանքի վերելքին, որովհետեւ »դուք էք Ազգ. Առաջնորդարանի գործին յենարանն ու նեցուկը« Եզրակացուց ան: Նոր տարուան համար, ան յատուկ բարեմաղթութիւն ուղղեց Առաջնորդ Սրբազնին:

## ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Պաստառի վրայ ցուցադրուեցաւ Մեծի Տան Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսին շնորհաւորանքի ու բարեմաղթութեանց պատգամը:

Առաջնորդ Սրբազնին ու անոր շուրջ խմբուած Ներկաներուն նոր տարին ու Ս. Ծննդեան տօնը շնորհաւորելու կողքին, Վեհափառ Հայրապետը յատուկ կարեւորութեամբ վեր կ'առներ 2010ը Յայ Կնչ ծօնուած ըլլալու իրողութիւնը, շեշտելով, որ Յայ Կինը դարերու ընթացքին ու այսօր, այրերու կողքին համահաւասար դեր ունեցած է իբրեւ ընտանիքի սիւն ու դաստիարակ: Ան նաեւ հանգամանօրէն կանգ կ'առներ Կաթողիկոսութիւնն ու թեմերու ժողովրդանուեր ծառայութիւններուն վրայ, նշելով, որ անիկա կը հետեւի Թրիստոսի քայլերուն, տրուած ըլլալով, որ Թրիստոսի աշխարհ առաքելութեան եռթիւնը մարդկութեան ծառայութիւնն էր: Վերջապէս, գնահատանք կ'արձանագրեր մեր Թեմին անցեալ տարուան իրագործումներուն համար, մաղթելով, որ աշխատանքը շարունակուի նոյն թափով ու կորովով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՐ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ՈՂՋՈՅԵԸ

Ողջոյնի հակիրճ խօսք արտասանեց Հայաստանի գլխաւր հիւպատոս Տիար Գրիգոր Յովիաննիսեան: Ան Հայաստանի կառավարութեան ու իր անունով շնորհաւորեց բոլորին նոր տարին, մաղթելով յաջողութիւն, քաջառողջութիւն եւ համերաշխութիւն՝ թէ Հայաստանի եւ թէ Սփիրոֆի մէջ:

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Յայտագիրը ուներ նաեւ գեղարուեստական բաժին:

Մուտքին, ապա նաեւ ընթրիքի պահուն, «Տօնական» նուագախումբը Ներկայացուց ժողովրդային երաժշտութիւն:

Յայտագիրին հիմնական բաժինը վստահուած էր Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երիտասարդաց երգչախումբին, ոեկավարութեամբ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեանի: Երգչախումբին Ս. Ծննդեան երգերուն՝ դաշնակի վրայ ընկերացան Արմենուիկ Տերտերեան, իսկ ջութակով՝ Արմինէ Ներկարարեան ու Ռաքել Զապունեան: Երգչախումբը կատարեց «Լուր գիշեր», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» եւ «Զանճառելի Լուսոյ Մայր» շարականները, իսկ աւարտին Ներկաները առաջնորդեց «Կիլիկիա» եւ «Ի վեհ բարձանց» մաղթերգներով: Ետև եւ Ելեսա Քարիմեանները մասնակցութիւն բերին գուգերգով, իսկ Մէյրի Մելքոնեան կատարեց մեներգ մը:

Համազգայինի Օրէնք Զառունթիի «Երազ» պարային դպրոցի աշակերտները, ոեկավարութեամբ Փըրլի Վարժապետեանի, մթնոլորտը խանդավառեցին հայկական պարերով:

## ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Երեկոյին եղրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան առաջին հերթին անդրադարձաւ Ս. Ծննդեան պատմական դեպքին ու խորհուրդին եւ այժմեական պատգամներուն մասին: Ազա շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան նեցուկ կանգնող բարերարներուն ու ազգայիններու, անդրադարձաւ անցեալ տարուան ընթացքին Ազգ. Առաջնորդարանի հովանիկին տակ տեղի ունեցած կարեւոր իրագործումներուն, որոնց կարգին՝ Լաս Վեկասի ծխական համայնքին կողմէ սեփական կալուածի մը ձեռք բերումը, նպատակ ունենալով Եկեղեցւոյ մը ու մշակութային կերպոնի մը կառուցումը:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք ուղղեց Լիսի հաստատութեան հիմնադիրին ու պատասխանատուներուն, նկատի ունենալով, որ Լիսին Վերջերս Ազգային Վարժարաններուն կատարեց ընդամենը մեկ միլիոն տոլարի նուիրատուութիւն:

Առաջնորդ Սրբազանը, ի շարս այլ անակնկալներու, գեղեցիկ անակնկալ մը ուներ ներկաներուն ու մեր ժողովուրդին: Ան յայտարարեց, որ Սան Ֆրանսիսկոյի Ծովածոցի շրջանի ազգայիններէն՝ Տէր եւ Տիկին Տոքը. Վաչէ եւ Շուշիկ Գապայեան ամոլը 500,000 տոլարի իշխանական նուիրատուութիւն մը կատարած է Ֆերահեան Երկրո. Վարժարանի Ս. Նահատակաց նախակրթարանին: Այս ուրախ առիթով, Առաջնորդ Սրբազանը, յանուն Թեմիս Ազգային Վարչութեան, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինին, Վարժարանի տնօրենութեան եւ Ուսումնական Մարմինին, պաշտօնապես յայտարարեց, որ Վարժարանին նախակրթարանի բաժինը այսուհետեւ պիտի կոչուի «ԱՉԳ. Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ՄԱՐԻ ԳԱՊԱՅԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ», ի յիշատակ բարերար ամոլի մօր: Ան իր խօսքը եղրափակեց բարեմաղթութիւններ ուղղելով ներկաներուն, մեր ժողովուրդին եւ հայրենիքին: (Առաջնորդ Սրբազանին խօսքը տեսնել առանձին:)

## PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER CULMINATES WITH GREAT SUCCESS

- CABAYAN FAMILY DONATES \$500,000 TO HOLY MARTYRS ELEMENTARY
- ELEMENTARY WILL BE RENAMED “HOLY MARTYRS MARIE CABAYAN ELEMENTARY SCHOOL”

At the start of the New Year, Armenians worldwide prepared to celebrate the Nativity and Epiphany of our Lord Jesus Christ. This glorious feast was ceremoniously celebrated within the Western Prelacy with church services and the Prelate's Traditional New Year and Christmas Dinner.

The celebration began on Tuesday, January 5<sup>th</sup>, 2010, Christmas Eve, with evening services and Divine Liturgy. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at Holy Martyrs Church in Encino.

On Wednesday morning, the Prelate celebrated Christmas Divine Liturgy and delivered the sermon at St. Mary's Church in Glendale. At the conclusion of the Liturgy the Prelate conducted the blessing of water ceremony symbolizing the baptism of our Lord.

In the evening, the Prelate's Traditional New Year and Christmas Dinner took place at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello. This year's dinner was hosted by Mr. and Mrs. Harout and Christina Jabarian, Mr. and Mrs. Hagop and Hera Jabarian, and Mr. and Mrs. Kevork and Tracy Hasbanian.

The evening began with the procession of clergy, headed by the Prelate, into the hall, candles in hand and collectively singing Christmas hymns. H.E. Archbishop Yeprem Tabakian read the passage from the Gospel of Mark telling of the Glorious Birth of Christ, after which the blessing of tables took place. The Prelate then announced that in honor of 2010 being declared the Year of the Armenian Woman by H.H. Catholicos Aram I, the evening's hosts had donated pearl crosses to be given to all the women present, and proceeded to bless the crosses.

Over 600 guests had gathered for the dinner, among them the Consul General of Armenia Grigor Hovhannisyan, Central Executive members Mr. Khajag Dikijian and Mr. Vahe Yacoubian, ARF Bureau member Dr. Viken Hovsepian, ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian and members, representatives of ANC, ARS, Homenetmen, and Hamazkayin, former Foreign Minister of Armenia Raffi Hovannisian, elected officials, newly elected Los Angeles City Councilman Paul Krekorian, members of the Prelacy Executive Council, Board of Regents, parishes' Boards of Trustees, sponsors, friends, and members of the media.

The official program began with welcoming remarks by Master of Ceremonies Rev. Fr. Vazken Atmajian, after which he invited Ladies Auxiliary Vice-Chair Mrs. Dzovig Zetlian to deliver her remarks on behalf of the Ladies Auxiliary.

Executive Council Chair Dr. Garo Agopian was then invited to deliver his remarks. After welcoming the guests, Dr. Agopian briefly touched upon the spiritual significance of Armenian Christmas as a time of renewal of our faithfulness to our religious and national values and traditions. Reflecting on the difficulties experienced in the year 2009, he conveyed his wishes for a new year filled with prosperity and successes. Dr. Agopian then went over the general activities of the Prelacy in the past year and the endeavors of the committees that serve under the jurisdiction of the Prelacy, concluding by calling on all to continue their devoted work and service to our church, our cause, and our nation.

Guests then watched the taped message of H.H. Catholicos Aram I in which His Holiness emphasized the significance of dedicating this year to the

Armenian woman given that throughout history, Armenian women have been fundamental pillars of our families and nation. Speaking of the mission of the Catholicosate and its Dioceses, His Holiness stated that the work carried out by the Armenian Church follows the example set by Jesus Christ, Whose earthly mission was to serve man. His Holiness concluded by commending the Prelacy's previous year's activities, and wished success for future endeavors.

Remarks were also delivered by Consul General Grigor Hovhannisyan. On behalf of the leadership of Armenia, the Consul General conveyed his well wishes for a new year filled with success and harmony for all Armenians, in Armenia and the Diaspora.

The evening also included a cultural program. Throughout the night, guests enjoyed traditional Armenian music presented by the "Donagan" band. The Prelacy "Lousavorich" youth choir, led by Very Rev. Fr. Barthev Gulumian, participated in the program with a series of Christmas carols and hymns. The choir was accompanied by Armenouhi Derderian on the piano, and Armine Nerkararyan and Raquel Zabounian on the violin. A duet was sung by Edna and Elena Karimian, and a solo song presented by Merri Melkonyan. The Orange County Hamazkayin "Yeraz" dance group also participated with two dances.

The Prelate was then invited to deliver his message, which he began by reflecting on the circumstances of the Birth of Christ and the timeless messages that accompany His Glorious Nativity and Theophany. He conveyed his gratitude to His Holiness for his paternal guidance, and also his appreciation to Prelacy supporters and friends for their contributions to the advancement of our mission. The Prelate went over some of the highlights from the previous year, most notably the purchase of a property by the Las Vegas parish which will house the future church and cultural center.

The Prelate also expressed his thanks and gratitude to the administration of The Lincy Foundation, who recently made a donation of one million dollars to Prelacy Schools.

The Prelate then announced that he had another surprise, announcing that San Francisco Bay area residents Dr. and Mrs. Vatche and Shoushig Cabayan had donated \$500,000 to Holy Martyrs Elementary School and Ferrahian High School. On behalf of the Executive Council, Board of Regents, and the school administration and board, the Prelate officially announced that the elementary school will be renamed "**HOLY MARTYRS MARIE CABAYAN ELEMENTARY SCHOOL**" in honor of the donor's late mother. The evening concluded with the benediction by the Prelate.